

ՃԱՌ ՀԱՅ ԲԻՆԵՐԻ

ԺԿՒԲՆՆԵՐ, Պարոններ,
ԳԵՐՃԱԽՈՍՈՎԵԹԵԿԱՄՔՐ, մը, ուր ամբողջ ժո-
ղովուրդի մը յուզումը բանաստեղի մը գու
իմացականութեամբը լուսաւորուած է, Արշակ
Չօպանեան մեզի բացառեց իմաստն այս բա-
րանչելի եւ այլազան ցերեկոյթին: Հայ մը-
տաւրականները Փրանսական մշակոյթին կը
մատուցանեն, իբր նուէր սիրոյ եւ երախտա-
զիտութեան, այս «փոնջը մտաւորական ծա-
ղիկներու», որուք ճնի ճեկուունին, վաս կամ
փափուկ գոյներ, բայրեր՝ մերթ մահաշունչ,
յաճախ հերոսական, միշտ խորաթափանց:
Մուսանները կը սիրեն փոխ առ փոխ երգերը,
ու կը յայէք որ Ֆրանսայի մէկ գրագէտը տար
Հայ մէծ բանաստեղին պատասխանը: Ֆրան-
սայի Գրողներու Ընկերութիւնը ատոր Համար
ընտրած էր մին այն մարդոցն որ ամենէն կա-
տարեալ կերպով կը ներկայացնեն յատին մշա-
կոյթը եւ անոր Հազար հոսակից ունեցող հա-
րսատութիւնը: թթէ հանգամանքները մեզի դր-
յացած չըլլային ներկայութիւնը ք. Հ. Ռոնի
երէցի, որ ոչ միայն նկարագիրներու ասեղծիչ
մը եւ զեղեցիկ առակներու զրուցաբան մըն է,
այլ եւ գիտուն մը եւ իմաստակը մը, մենք այս
վայրէկնեմի խորունկ իսօսեր պիտի լսէինք:
Պիտի իմանայինք թէ յուզման ի՞նչ երանգնե-
րով կրնանք ու պարտինք թիւունիլ այս մեծա-
բանքի աղնիւ արտայայտութիւնները: Աչ մի-
այն Ֆրանսա կը հրճուի այն Համակրութիւննե-
րով զոր կը ներշնչէ, այլ, Հակատակ այս բա-
ցաւրութեան նորօինակ երեւոյթին, ան ե-
րախտագէտ է երախտագիտութիւններ համար
զոր իրեն կը յայտնին:

Մեզի համար սրտապնդիչ է, այս տագնա-
պի ժամուն, մեզ օմանգակուած զգալ ժողո-
վուրդներու սիրովը, ու մանաւորապէս՝ սէ-
րերու ամենէն յուզիչովը, մարտիրոսներու սի-
րովը: Ասուկից զատ, երբ հարցը քաղաքակրթու-
թեան ինչերու վրայ է, ինչ որ կընծանք է-
ակներու որ սորգական հետեւողներ չեն, ան-
դիտակից փոխանակութիւն մըն է: առասու-
ած նութիւնը հարստանալու ամենէն ապահով
միջոցն է, ու չմէ զիտեր ինչ հրաշքի թերմամքը,
վերջի վերջու կը նկատենք որ իրաքանչիւր ոք
աւելի ստացած է քան ինչ որ ամենքը տուած
էին: Լայնածաւալ Հայելի մը կը կանգնի՝ միայ-
նակ՝ Արեւմուռքի մէջ: Ան իրերու միակ ցույ
մը յառաջ կը բերէ: Խայց անո՛ Արեւելքի մէջ
**եղացարան Հայելի մը ը անոր առջնու: կը փո-
ռուի: աւելիք, ալ մէկ պատկեր մը չը որ ունինք,
այս պատկերներու ամերող ժողովուրդ մը: Ա-
մենէն ժօտիկները իրենց գիծերու մաքուր յը-
տակութիւնն ուշինչ կը կորանցնեն, բայց այլք
անորոշութեամք է որ կը փթթին, եւ, երազի
խուսափման մը մէջ, կը ճոխանան, նթի կա-
րելի է այսպէս ըսմէ, Հետաւորութեամք ու
խորհուրդով:**

Աւա՛զ, ի՞նչքան սուգ կը խառնուի, ու
պիտի բսէի նաեւ՝ ի՞նչքան ամօթ, մեր հարս-
տութիւններէն ու Հպարտութիւններէն ոմանց:
Անարդարութիւնը, զոր Ֆրանսա չկրցաւ ար-
դիւել, կը զգանք, ցորքան անիկա չէ գարման-
ուած, իրը բեն մը եւ իրը չիմարուած պարտք
մը: Ամենէն հետաւոր անդթութիւնները մեղ կը
խոցնէն, եւ ամէն ուր որ անմեղը կը հարուած-
ուի, Ֆրանսայի արիւնը կը հոսի ու կ'աղաղա-

կը Արելի արիւնին հետ : Բայց ճիշդ այս յուղիչ ճշմարտութիւններն է որ մեզի կ'ըսէ Ռոնի երէցը՝ նամակի մը մէջ, որուն ընթերցումն այսքան ուշացուցած ըլլալուս համար կը մեղադրեմ ինքինքս Մի՛ վախնաք սակայն որ անհամեստութիւնը ունենամ իմ կողմէս մէկ բառ իսկ աւելցնելու կարդալէ յիսոյ այդ նամակը՝ գեղեցիկ ու պարզ ինչպէս ամուր լրջագծով սոկի բաժակ մը :

ՈՒՆԻ ԵՐԵՑԻ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂՈՇՄԸ ԱՌ
Ա. 20ՊԱՆԵՍՆ

Պարոն եւ սիրելի եղայրակից,
Հարկեցուցիչ հանդասանքեր զիս կը զըր-
կեն ձեր հաւաքյթին մասնակցելու մեծ հա-
ճոյքին : Խորապէս կը ցաւիմ ատոր համար :
Հայաստանի դատը ինծի մասնաւրապէս սի-

րելի է սրբազն դատ մըն է ան : Զեր ցեղին մարտիրոսութիւննը ամենէն զարհուրելի դըր-
ուազներէն . մէկն է մարդկային կայրապու-
թեան : Անիկա եւրոպական ու ամերիկեան քա-
ղաքակրթութեան համար՝ աւելի է քան վիշտ
մը, խեճի խայթ մըն է : Ազատ մեծ ժողովուրդ-
ները գէշ կասարեցն իրենց պարտականու-
թիւնը հայերուն հանգէց : անոնք ձեզի լիա-
կատար հատուցում մը պարտական են :

Մեր յաղթանակին օրհնեալ ժամը պիտի
ըլլայ նաեւ, ատոր հաստատ յոյսն ունիմ, ձեր
տառապանքներուն վերջին ժամը . այդքան եր-
կար ատեն անբաններու տիրապետութեան տակ
հեծելչ յիսոյ, ձեր ցեղը պիտի ճանչնայ քաղցր
ծաղկափթթումները ազատութեան, արդարու-
թեան եւ գեղեցկութեան :

Բոլոր սրաով ձերդ
Փ. Հ. ՈՒՆԻ ԵՐԵՑ